կանալ վիճմանց և հակառակութեանց՝ հրաման ետ Դատաւորն երից ազգաց 'ի միասին շինել, և բաժանորդութեամբ վճարել զծախսն, և մնալ դարձեալ ըստ առաջին սովորութեան. Թէպէտ Հայք ընդդիմացան բազմօք այսմ դատաստանի, զի կորուսին զառաջին իրաւունս իւրեանց, այլ անմարթ էր յայնժամ շրջել զմիտս Դատաւորին։ Եւ զկնի շինութեան զմբեթին տուաւ երից ազգաց Հայոց, Յունաց Լատինաց մի մի բանալի, և Դատաւորն գրեաց գիր հաստատութեան և բարձաւ վէճն ١٢٥٠։

Այլ վասն նորոգութեան և շինութեան բաժնին Հայոց 'ի Տաճարին Ս. Յարութեան նեղեալ էին Հայք 'ի Յունաց, որպէս գրեցաք, զի զհրաման շինութեան ինքեան վերապահեալ էր Արքայ, և յառաջին նուագի Յունաց ետ զայն, որք ոչ շինեցին զտեղիս Հայոց, մանաւանդ թէ խանգարեցին և գողացան, և 'ի սմին ժամանակի խնդրեցին Հայք զայն հրաման շնորհել ինքեանց, որոյ վասն տուաւ հրովարտակ ١٢٤٩ թուին, զի զբաժանորդ տեղիս շինեսցեն ընկերութեամբ և զսեփհական տեղիս անկախութեամբ։

Եւ վասն փակեալ դրան Բեթղեհէմի Դատաւորք Երուսաղէմի 'ի սադրելոյ Լատինաց պէսպէս մեկնութիւնս տային առաջին հրովարտակին իբր անզօր, և երբեմն սպառնային բանալ զդուռն, որով լինէր վնաս մեծ Հայոց, և 'ի ծանուցանել զայսոսիկ Արքայի, տուաւ վերստին հրովարտակ ١٢٥١ թուին 'ի հաստատութիւն առաջնոյն, զի մի բացցի դուռն այն. և վասն շինութեան Համբարձման տեղւոյն ըստ մոռաց հին վաւերական գրոց եւ Իլամի Դատաւորին Երուսաղէմի դարձեալ տուաւ հրովարտակ ١٢٥١ թուին. և 'ի հակառակիլ Լատինաց և Յունաց, դարձեալ առին Հայք հրովարտակ ١٢٥٢ թուին 'ի հաստատութիւն առաջնոյն։ Զայսոսիկ հրովարտակս առեալ Յովհաննու վարդապետի ստարութեամբ Ստեփաննոս Գատրիարքի և գլխաւորաց ազգին առաքեաց յԵրուսաղէմ։

Եղիա Եպիսկոպոս Եւդոկիացի մեկնեցաւ յԱթոռոյն, առեալ ընդ իւր Եւդոկիացի Յակոբ և Յովհաննէս և Կեսարացի Կարապետ վարդապետս, որք էին աշակերտք իւր, եւ 'ի նաւելն 'ի Կոստանդինուպօլիս՝ վախճանեցաւ 'ի ճանապարհի, և աշակերտք նորին թաղեցին զնա 'ի կղզին